



# Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



### ԲԱՐԵԿԵՆՈԱՆ ՅԻԱՆԱԿԻ

15 ՆՈՅԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Փրկարար Յոյսը	էջ 2
Ծանուցում	էջ 4

### ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ

(25.9-26.7)

**Ա**յն օրը պիտի ըսեն. «Ահա ապրի մեր Տէր Աստուածը, որուն ապաւինած էինք: Անիկա փրկեց մեզ, որովհետեւ ի՛նքն է Տէրը որուն յուսացած էինք: Յնձանք եւ ուրախանանք մեր փրկութեան համար»: Որովհետեւ այս լերան վրայ Աստուած մեզ պիտի պաշտպանէ, իսկ Մովսէսը պիտի կոխկռտէ այնպէս՝ ինչպէս յարդը կը կոխկռտեն կամնասայլով: Այո՛, Աստուած իր ձեռքը պիտի երկարէ եւ զայն խեղճացնէ ու կորուստի մատնէ, զայն վար բերելով այն բարձունքէն որուն կը ձգտէր ան: Աստուած պիտի փլցնէ քու բարձր եւ ամուր պարիսպներդ, ո՛վ Մովսէս, զանոնք գետնին հաւասարեցնելով: Այն օրը Հրէաստանի մէջ հետեւեալ երգը պիտի երգեն. «Զօրաւոր է մեր քաղաքը, որովհետեւ մեր Փրկիչը ի՛նքն է անոր պարիսպն ու պատուարը: Բացէ՛ք դռները, թող ներս գայ արդարութեան հետեւող եւ ճշմարտութիւնը պահող ժողովուրդը. այն ժողովուրդը, որ ճշմարտութիւնը կը պաշտպանէ եւ խաղաղութիւնը կը պահպանէ: Միշտ քեզի՛ յուսացինք, Տէ՛ր, ո՛վ Աստուած, մեծ եւ յաւիտենական. դուն, որ խոնարհեցուցիր եւ վար ձգեցիր երկինքի բնակիչ հրեշտակները, պիտի կործանես նաեւ մարդոց հզօր քաղաքները եւ զանոնք գետնին պիտի հաւասարեցնես: Խոնարհներն ու հեզերը

միայն պիտի բնակին այդ քաղաքներուն մէջ, եւ տնանկները պիտի երթան հոն հաստատուելու: Բարեպաշտներու ճամբան ուղիղ է, Աստուած հարթած եւ պատրաստած է անոնց ճամբան»:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԵՆ

(1.1-11)

**Պ**օղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի ծառաներս, կը գրենք ձեզի՝ Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուդ որ Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն ու սարկաւագներուն: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէրը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետարանչութեան գործին: Եւ վստահ եմ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, զայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին եւ ձեզ սիրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին, ըլլա՛յ բանտարկութեանս ընթացքին, ըլլա՛յ երբ ազատ վիճակով Աւետարանը կը պաշտպանէի ու կը հաստատէի: Միայն Աստուած գիտէ թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գործովը:

Իմ աղօթքս է որ ձեր սէրը աւելի եւ աւելի աճի աստուածգիտութեամբ եւ կատարեալ

Իմ աղօթքն է որ ձեր սերը աւելի եւ աւելի անի աստուած-գիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ...

դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ անբասիր, եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (9.44-50)**

**Մ**ինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լա՛ւ մտիկ ըրէ՛ք եւ մի՛ մոռնաք ասիկա. մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախճային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները, սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»: Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»:

ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը:

**ՓՐԿԱՐԱՐ ՅՈՅԱԸ**

ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

«...նորէն աղանի մը տապանէն արձակեց: Ու իրիկուան դէմ աղանիս անոր եկաւ եւ ահա իր բերանը ձիթեմի մը փրցուած տերեւ մը կար», Մն 8.10-11:

«...ի՛նքն է Տէրը, որուն յուսացած էինք», Ես 25.9:

Ի՞նչ է յոյսը: Եւ ո՞րն է փրկարար յոյսը: Յոյսը սպասում է, կամ ըզձանք է, կամ ակնկալութիւն է, կամ ապագային նայիլ մըն է, որ բարի դէպք մը պատահի, երազ մը իրականանայ, յաջողութիւն մը ձեռք բերուի: Նաեւ կայ չարիք եւ անէժք եւ ճախողութիւն ցանկացող յոյսը:

Հետեւաբար, երկու բնոյթի յոյս կայ՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար:

Չարիք ցանկացող յոյսին մասին պիտի չխօսիմ այստեղ, այլ պիտի անդրադառնամ բարիք ցանկացող կամ ըզձացող կամ ակնկալող յոյսին:

Բարի յոյսի, ըսենք, երկու մակարդակներ կան:

Առաջինը կարելի է որակել երկրաւոր (նաեւ՝ աշխարհային), իսկ երկրորդը՝ երկնաւոր (նաեւ՝ կրօնական):

Երկրաւոր մակարդակի բարի յոյսը իր տեսակները ունի, որոնք տարբեր տարածքներու յոյսեր են. այսպէս՝ հոգեբանական, ընկերային, քաղաքական եւ այլն: Այս տարածքներուն մէջ արթնցած ու սնուցուած յոյսերը այն սպասումներն են, կամ այն ըզձանքներն են, կամ այն ակնկալութիւններն են, որ երբ սպասուածները կամ ըզձացուածները կամ ակնկալուածները իրականանան, կամ ձեռք բերուին՝ իրենց վախճանը գտած կ'ըլլան:

Երկնաւոր մակարդակի բարի յոյսը, սակայն, մէկ տեսակ է: Անիկա կատարելապէս առ Աստուած դարձած է: Առ Աստուած դարձած յոյսը ամէն օր կ'իրականանայ եւ ամէն օր իր վախճանական լրումը կամ կատարումը կը սպասէ:

Քրիստոնէական անկիւնէն դիտելով, երկնաւոր յոյսի գլխաւոր երկու փորձառութիւններ

կան: Առաջինը Հին Կտակարանեան փորձառութիւնն է, իսկ երկրորդն ալ Նոր Կտակարանեան փորձառութիւնն է: Այս երկու փորձառութիւնները իրարմէ անջատ չեն, այլ կը պատմեն Աստուծոյ հետ փոխյարաբերութեան մը զարգացումը եւ հաւատաւոր հոգիներուն աճումը:

Հին Կտակարանին մէջ յոյսի փորձառութեան աղբիւրը Աստուած է: Ան է, որ յոյս կը ներշնչէ (յիշել Աբրահամի պատմութիւնը, որուն խոստում տրուեցաւ, թէ բազմաթիւ ազգերու հայր պիտի ըլլայ):

Սաղմոսը «Երանի՛ր» կու տայ անոր՝ որ Տիրոջ կը յուսայ (Սղ 40.4), քանի որ այդ յոյսը ենթակային կու տայ ներքին դիմացկունութիւն մը, եւ ան չի հրաժարիր իր յոյսի աղբիւրէն, ու «չի կռթնիր սուտ աստուածներուն» (նոյն, անդ), այլ բոլոր դժուարութիւններուն եւ նեղութիւններուն մէջ կը համբերէ (նոյն, հմր 1):

Առականերու գիրքին մէջ գրուած է. «Պիտի չվախնաս յանկարծահաս վախէն, ո՛չ ալ ամբարիշտներուն արշաւանքէն՝ երբ գայ, վասնզի քու յոյսդ Տէրը պիտի ըլլայ» (Առ 3.25-26): Ի՞նչ ըսել է՝ «յոյսդ Տէրը պիտի ըլլայ»: Ինչպէ՞ս է, որ Տէրը կ'ըլլայ յոյսը:

Յոյսը ընկալուած է նաեւ իբր վստահութիւն: Ժիշդ այդ պատճառով ալ, քիչ առաջ ակնարկուած Սղ 40.4-ի «Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն»ը այսպէս մատուցուած է. «Երանի՛ր այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի»:

Ան որ կը վստահի՝ իր հոգին կը հաստատուի վստահութեան առարկային կամ անձին վրայ: Նոյնպէս՝ ան որ Աստուծոյ կը վստահի, իր հոգին կը հաստատուի Աստուծոյ վրայ: Շէնքի մը հիմքը եւ անոր վրայ բարձրացած կառոյցը մէկ են, իրարմէ անջատ չեն կրնար ըլլալ: Նոյնպէս ալ Աստուծոյ վրայ վստահութիւնը եւ Աստուած մի են:

Արդ, առ Աստուած յոյսը եւ Աստուած մի են: Ան որ Աստուծոյ կը յուսայ՝ Աստուծոյ միացած է կամ անոր հետ իր միութիւնը կ'ապրի: Ո՛չ թէ ինքը Աստուծոյ կը վերափոխուի, այլ անոր հետ մի կ'ըլլայ: Միութիւնը Աստուծոյ էութեան նոյնացում չէ: Եւ քանի Տէրը յաղթողն է, Տիրոջ հետ միութիւնը յաղթանակին ստուգութիւնը ունի:

Անշուշտ մարդկային փորձութիւն է, որ անհատը հոգնի եւ տկարանայ իր յոյսին իրականացումը սպասելէ: Նոյնիսկ կրնայ յուսաբեկութիւն ալ ապրիլ: Բայց այնքան ժամանակ որ խորապէս

հաւատարիմ կը մնայ Աստուծոյ, անոր յոյսը կրնայ վերահաստատուիլ, ըստ խօսքին թէ՛ «...եթէ ծառը կտրուի, դեռ յոյս կայ, որ վերստին ծլի ու ճիւղը պակաս չըլլայ: Թէեւ անոր արմատը հողին մէջ ձերացած ըլլայ ու անոր կոճղը հողին մէջ մեռած, անիկա ջուրին հօտէն պիտի ծաղկի ու նոր տնկուած ծառի պէս ճիւղեր պիտի արձակէ» (Յոբ 14.7-9): Աստուածուրացներուն եւ կեղծաւորներուն յոյսը միայն անվերականգնելի է (հմտ նոյն, 8.13):

Նոր Կտակարանին մէջ (արդար ըլլալու համար՝ Պօղոս առաքեալի մօտ) յոյսին ընկալումը եւ մեկնաբանութիւնը աւելի խոր է եւ աւելի բացարձակ: Առաքեալ Աբրահամի մասին գրած է. «հակառակ որեւէ յոյս չըլլալուն՝ Աբրահամ յուսաց» (Հռ 4.18): Ան յարացոյցն է քրիստոնէական յոյսին:

Ինչպէ՞ս յուսալ, սակայն, երբ առարկայական իրականութիւնը նուազագոյն արտօնութիւնը չի տար: Հին Կտակարանին մէջ յոյսը կեանքի փորձառութեան վրայ կը հիմնուի, Նոր Կտակարանին մէջ կեանքի փորձառութիւնը թէեւ կարեւոր համարուած՝ բայց անբաւարար է եկեղեցւոյ յոյսին եւ յուսալուն հիմք ըլլալու: Ասիկա ըսել է, թէ յոյսին եւ յուսալուն կատարեալ հիմքը այլ տեղ կը գտնուի: Ո՞ւր:

Եկեղեցւոյ հաւատքին *raison d'être*-ը Քրիստոսի եւ մեռելներու յարութիւնն է: Ինչպէս Պօղոս առաքեալ ըսած է. «Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն չէ առած. եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը» (Ա. Կր 15.13-14): Ասոր կը հետեւի նաեւ այն՝ որ եկեղեցւոյ յոյսին եւ սիրոյն *raison d'être*-ը եւս Քրիստոսի եւ մեռելներու յարութիւնն է:

Արդ, քրիստոնէական յոյսը էապէս յարութեանական է: Առանց յարութեան՝ քրիստոնէական յոյս չկայ:

Քրիստոնեան «յաւիտենական կեանքին յոյսով» կը հաւատայ Քրիստոսի, եւ նոյնով «Աստուծոյ բոլոր ընտրեալներուն հանդէպ» սէր կը ցուցաբերէ (Կղ 1.4-5):

Ի՞նչ է բարոյական յատկանիշը երկնաւոր յոյս ունեցողին:

Ըսուած է. «Արդարներուն յոյսը ուրախութիւն է» (Առ 10.28): Ուրեմն, երկնաւոր յոյս ունեցողը արդարութեամբ կ'ապրի: Եւ արդարին յոյսն է, որ իսկական ուրախութեամբ կը պսակուի, քանզի Տէրը ի՛նք գայն կ'օրհնէ (Սղ 5.12), եւ անոր հետ կ'ըլլայ (հմտ Սղ 14.5):

30-ԱՄԵԿ  
Ս. ՅԱԿՈԲԻ ԿՐԻԱԿԱՏՐԵԱՅ  
ԿՐԹԱՐԱՆԻՆ

ՀՈՎԱՆԱԽՐՈՒԹԵԱՄՔ՝  
ԳՐՇ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐՔ.  
ՅԱԿՈԲԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ՝  
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵԱԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ԹԷՅԱՍԵՂԱՆ

ԲԱՆԱԽՕՍ՝  
ՀԳՇ. Տ. ԳԵՂԱՐԻ ՎՐԴ.  
ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ

(ԹԵԱԻՆ ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ  
ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՎԱՐՔ)

ԱՐԻՑ՝  
ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ  
ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՅՐ՝  
ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ Ա. ԱՇԱՐՈՒՆԵԱՆ  
ՍՐԱՀ

ԹՈՒԿԱՆ ԵՒ ԺԱՄ՝  
ՀԱՔԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-Ի  
ԵՐԵՎԱՆԻ ժԱՄԸ 7.00-ԻՆ

ՏԵԿԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՀԱՃԵՑԻՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ  
ՀԵՏԵԻՆԱԿ ԹԻՒՆ  
514 331 5445 x202

ԲԱՏՐԱՎԱԾԵԱՆ ՖՈՆՏԻ  
ԿԱՋԱԿԵՐՊՈՒԹԵԱՄՔ  
ԵՒ

ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՍԱՆԱՀԻՆ  
ՄԱՍԱՃՐԻՐԻ  
ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՄՔ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ  
ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵԱԾ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ»

ՈՒՍՈՒՄԱՐՐՈՒԹԵԱՆ  
(ՀԵՂԻՆԱԿ՝ ԳԱՌԱԿ Ք. Գ.)

ԳԻՐԸ ԿՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ՝  
ԴՈԿՍ. ԱՅՏԱ ՊՈԻՉԲԱՆԵԱՆ

ԽՕՍԲ Կ՝ԱՌՆԵՆ  
ԱՐՇ. Տ. ԱՌԱԷՆ Ա. ՔՀԱ. ԻՇՈՎԱՆԵԱՆ  
ԵՒ ՊԱՐՈՒԱՅԸ  
ՊԵՏՐՈՍ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ  
ԵՒ ՎՐԷԺ-ԱՌԱԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ

ՀԻՆԳՇԱՔԹԻ, 10 ԴԵԿՏԵՄԵՐԻ  
ԵՐԵՎԱՆԻ ժԱՄԸ 8.00-ԻՆ,  
ՄՈՒԹԵՎԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ  
ԱԽԵՏԻԱ ԱՇԱՐՈՒՆԵԱՆ ՍՐԱՀ: